

Տևողությունը – 150 րոպե

- Քանի՞ եռանիշ թիվ կա, որոնցից յուրաքանչյուրի թվանշանների արտադրյալը հավասար է 6-ի:
1) 3 2) 6 3) 9 4) 10
- Տարվա ամիսներից մեկն ուներ 4 շաբաթ օր, 5 կիրակի և 4 երկուշաբթի: Շաբաթվա ի՞նչ օր էր այդ տարվա մարտի 8-ը:
1) Երկուշաբթի 2) Չորեքշաբթի 3) Ուրբաթ 4) Հնարավոր չէ որոշել
- Երկու հոգի սալոր ունեին: Մեկն ասաց մյուսին. «Տուր ինձ քո սալորներից երկուսը, և ես քեզանից երկու անգամ շատ սալոր կունենամ»: Մյուսը պատասխանեց. «Ոչ, ավելի լավ է դու ինձ երկու սալոր տուր, և մենք հավասար թվով սալոր կունենանք»: Քանի՞ սալոր ունեն նրանք միասին:
1) 12 2) 14 3) 20 4) 24
- Բանվորը 30 օրվա աշխատանքի դիմաց պետք է ստանար հազուստ և 108 հազար դրամ: Նա երեք օր աշխատելուց հետո ազատվեց աշխատանքից՝ ստանալով միայն հազուստ: Քանի՞ դրամ արժե հազուստը:
1) 3600 2) 12000 3) 10800 4) Այլ պատասխան
- 11սմ կողմով քառակուսին տրոհել են երեք ուղղանկյունների: Այդ ուղղանկյուններից մեկի չափերն են՝ 5 սմ և 11 սմ, իսկ մյուսինը՝ 4 սմ և 6 սմ: Որքա՞ն է երրորդ ուղղանկյան պարագիծը:
1) 12 սմ 2) 18սմ 3) 20 սմ 4) 26 սմ
- Երկնիշ թվի թվանշաններից մեկը ջնջելուց հետո թիվը 21 անգամ փոքրացավ: Այդպիսի քանի՞ երկնիշ թիվ կա:
1) 1 2) 2 3) 3 4) 4
- Դավիթը թիվը բաժանում է 4-ի և 6-ի, հետո ստացված մնացորդները բազմապատկում: Արդյունքում նա չի կարող ստանալ.
1) 8 2) 9 3) 10 4) 15
- Վարդանը գրել է ամենափոքր բնական թիվը, որի թվանշանների գումարը հավասար է 100-ի: Ինչի՞նչ է հավասար Վարդանի գրած թվի հաջորդ թվի թվանշանների գումարը:
1) 2 2) 92 3) 99 4) 101
- Աճման կարգով գրել են 1 և 2 թվանշաններից կազմված բոլոր բնական թվերը՝ 1, 2, 11, 12, 21, 22, ...: Ո՞րն է այդ շարքում գրված ամենափոքր քառանիշ թվի համարը:
1) 13 2) 14 3) 15 4) այլ պատասխան
- Նարեկի հավաքածուում ընդհանուր քանակով 12 բզեզ ու սարդ կա: Նրանց բոլորի ոտքերի քանակը 80 է: Քանի՞ բզեզ կա հավաքածուում, եթե բզեզն ունի 6 ոտք, սարդը՝ 8 ոտք:
1) 6 2) 7 3) 9 4) այլ պատասխան
- Աշոտը գնեց 4 խնձոր: Առանց առաջինի՝ բոլորը միասին 610 գ է, առանց երկրորդի՝ 590 գ, առանց երրորդի՝ 550 գ, առանց չորրորդի՝ 530 գ: Քանի՞ գրամ են կշռում 4 խնձորները միասին:
- Գնացքը պյան մոտով անցնում է 9 վրկ, իսկ 195 մ երկարություն ունեցող կամրջի վրայով՝ 22 վրկ: Քանի՞ մետր է գնացքի երկարությունը:
- 25 գնդակներից 12-ը կարմիր է, 8-ը կապույտ, մնացածը՝ նարնջագույն: Գնդակներից 10-ը կաշվից են, մնացածը՝ ռետինից: Կարմիր, կապույտ և նարնջագույն ռետինե գնդակների քանակները հավասար են: Քանի՞ կարմիր կաշվե գնդակ կա:
- Պարանը ծալում են երկու հավասար մասի, ապա նորից են ծալում երկու հավասար մասի: Այնուհետև կտրում են՝ ստանալով 5 կտոր: Ստացված կտորներից երեքի երկարություններն են 20սմ, 35սմ, 40սմ: Քանի՞ սմ երկարություն ուներ պարանը:
- Երկնիշ թվի տասնավորը մեծ է միավորից: Քանի՞ այդպիսի երկնիշ թիվ կա: